

Հաստատված է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի
«08» հունվարի 2024 թ. թիվ 192 նիստում

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԻՆՈՎԵՆՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ
(ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ) ԵՎ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԿԱՐԳ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) կրթական ծրագրերի մշտադիտարկման (մոնիթորինգի) և վերանայման կարգը կանոնակարգում է Կենտրոնի կողմից իրականացվող կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և պարբերական վերանայման գործընթացները:
2. Կենտրոնի կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և պարբերական վերանայման գործընթացները կրթական ծրագրերի իրականացման փուլում դրանց որակի ապահովման և շարունակական բարելավման հիմնական մեխանիզմներից են:
3. Կենտրոնի կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման կարգը սահմանում է կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և պարբերական վերանայման գործընթացների նպատակները և խնդիրները, դրանց ներկայացվող հիմնական պահանջները և իրականացման ընթացակարգերը:
4. Կենտրոնի կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկումն իրականացնում են Կենտրոնի կրթության որակի ապահովման բաժինը, դեկանատը և կրթական ծրագրերն իրականացնող համապատասխան ամբիոնները՝ եռամյա պարբերականությամբ:
5. Կրթական ծրագրերի վերանայման պարբերականությունը որոշվում է ծրագրի իրականացման շրջափուլի սահմանված տևողությամբ, հավատարմագրման գործողության ժամկետով, ծրագրի մասնագիտական ոլորտի զարգացման տեմպերով և այլն:

II. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ

6. Կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկումը որակի ապահովման ներբուհական գործընթաց է, որի նպատակն է գնահատել կրթական ծրագրերի իրականացման որակը և համապատասխանությունը կրթական ծրագրի սահմանված նպատակներին ու համապատասխան պետական կրթական չափորոշիչների պահանջներին:

7. Մշտադիտարկման վերջնարդյունքը կրթական ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների պլանի կազմումն ու իրականացումն է:

8. Մշտադիտարկման խնդիրներն են.

1) գնահատել կրթական ծրագրի և նրա բաղկացուցիչ դասընթացների սահմանած նպատակներին հասնելու և ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերման ընթացքը և մակարդակը,

2) գնահատել դասավանդման, ուսումնառության և սովորողների գնահատման գործընթացների արդյունավետությունը, ուսուցման մեթոդների և տեխնոլոգիաների համապատասխանությունը կրթական ծրագրի պահանջներին և դրանց արդիականությունը, բացահայտել կրթական ծրագրի ռեսուրսային կարիքները,

3) բացահայտել և վեր հանել կրթական ծրագրի թերություններն ու իրականացման դժվարությունները և անհրաժեշտ ճշգրտումներ առաջարկել կրթական ծրագրում,

4) վերլուծել կրթական ծրագրի հիմնական քանակական բնութագրերը (ընդունելություն, հեռացումներ, առաջադիմություն, սովորողների բավարարվածություն, շրջանավարտների զբաղվածություն և այլն) և բացահայտել որակի անկման միտումները, եթե այդպիսիք կան,

5) գնահատել կրթական ծրագրի որակի բարելավման նախորդ պլանի կատարողականը,

6) բացահայտել կրթական ծրագրի ուժեղ և թույլ կողմերը, մշակել ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների (գործողությունների) նոր պլան և ապահովել վերջինիս կատարումը:

9. Կրթական ծրագրերի մշտադիտարկումն իրականացվում է մշտադիտարկման անցկացման ժամանակացույցին համապատասխան, որը մշակվում և Կենտրոնի տնօրենի հաստատմանն է ներկայացվում Կենտրոնի կրթության որակի ապահովման բաժնի կողմից:

10. Մշտադիտարկման գործընթացն իրականացնելու նպատակով դեկանի ղեկավարությամբ կրթական ծրագիրն իրականացնող համապատասխան ամբիոնի վարիչի մասնակցությամբ յուրաքանչյուր կրթական ծրագրի կամ կրթական ծրագրերի խմբի համար ձևավորում է մշտադիտարկման խումբ:

11. Մշտադիտարկման խումբը բաղկացած է առնվազն 5 անդամից: Խմբի կազմում ընգրկվում են տվյալ ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմից ներկայացուցիչ(ներ)՝ ամբիոնի վարիչի առաջարկությամբ: Մշտադիտարկման խմբում պարտադիր ներգրավվում են Կենտրոնի կրթության որակի

ապահովման բաժնի, դեկանատի և ուսանողական կազմի ներկայացուցիչներ: Խմբում կարող են ընդգրկվել նաև ուսումնական մասի ներկայացուցիչ և արտաքին փորձագետ:

12. Մշտադիտարկման խմբի կազմը հաստատվում է Կենտրոնի տնօրենի հրամանով՝ դեկանի ներկայացմամբ:

13. Մշտադիտարկման խումբն իր աշխատանքներն իրականացնելիս ղեկավարվում է սույն կարգով և հաստատված ժամանակացույցով:

14. Մշտադիտարկման գործընթացն սկսվում է նախորդ մշտադիտարկումից հետո կրթական ծրագրի որակի բարելավման միջոցառումների պլանի կատարման հետ կապված տեղեկատվության հավաքմամբ և վերլուծությամբ:

15. Մշտադիտարկման ընթացքում մշտադիտարկման խմբի կողմից ուսումնասիրվում են կրթական ծրագրի քանակական բնութագրերը, սովորողների և շրջանավարտների բավարարվածության հարցումների արդյունքները, պրոֆեսորադասախոսական անձնակազմի նկատառումները:

16. Մշտադիտարկման խմբի կողմից կազմվում է հաջորդ երկու տարիների համար կրթական ծրագրի որակի բարելավման միջոցառումների պլանը:

17. Մշտադիտարկման արդյունքների հիման վրա, ըստ սահմանված հաշվետվության ձևաթերթի (հավելված 1), մշտադիտարկման խումբը կազմում է մշտադիտարկման հաշվետվությունը:

18. Մշտադիտարկման հաշվետվությունը քննարկվում է համապատասխան ամբիոնի նիստում:

19. Մշտադիտարկման խմբի ղեկավարը մշտադիտարկման հաշվետվությունը և կից փաստաթղթերը ներկայացնում է Կենտրոնի կրթության որակի ապահովման բաժնի:

20. Կենտրոնի կրթության որակի ապահովման բաժինը իրականացնում է ստացված մշտադիտարկման հաշվետվությունների և կից փաստաթղթերի՝ սահմանված պահանջներին համապատասխանության ստուգումը: Անհամապատասխանության դեպքում դրանք վերադարձվում են մշտադիտարկման խմբին՝ վերանայման համար:

21. Ներկայացված մշտադիտարկման հաշվետվությունների հիման վրա Կենտրոնի կրթության որակի ապահովման բաժինը պատրաստում է Կենտրոնի կրթական ծրագրերի մշտադիտարկման ընդհանրական հաշվետվությունը և ներկայացնում Կենտրոնի գիտական խորհրդի հաստատմանը:

22. Կենտրոնի գիտական խորհուրդը, հիմք ընդունելով Կենտրոնի կրթության որակի ապահովման բաժնի կողմից ներկայացված հաշվետվությունը, քննարկումների արդյունքում հաստատում է այն, ինչը հիմք է հանդիսանում կրթական ծրագրերի բարելավմանն ուղղված միջոցառումների պլանների իրականացման համար:

III. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

23. Կրթական ծրագրի պարբերական վերանայման նպատակն է կրթական ծրագրի իրականացման մի քանի շրջափուլերի արդյունքների հիման վրա գնահատել նրա արդիականությունը (կրթական ծրագրի նպատակների համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին), շարունակման հիմնավորվածությունը (սոցիալական կարիքի առկայությունը՝ պահանջարկն աշխատաշուկայի և սովորողների կողմից), ինչպես նաև ծրագրի իրականացման փաստացի որակը և նրա հետագա շարունակման նպատակահարմարության կամ փոփոխությունների վերաբերյալ որոշման ընդունումը:

24. Կրթական ծրագրի ամբողջական գնահատումը և պարբերական վերանայումը համաբուհական գործընթաց է, որում կարող են ներգրավվել նաև արտաքին փորձագետներ:

25. Կրթական ծրագրի վերանայման գործընթաց է պահանջվում յուրաքանչյուր անգամ, երբ ծրագրի բովանդակության (առարկաների) փոփոխությունները գերազանցում են նրա ընդհանուր ծավալի 20%-ը:

26. Վերանայման գործընթացը պլանավորում և իրականացնում է ԳԿՄԿ կրթության որակի ապահովման բաժինը՝ համապատասխան մասնագիտական ամբիոնի հետ համատեղ:

27. Կրթական ծրագրերի վերանայման նպատակով Կենտրոնի կրթության որակի ապահովման բաժնի ներկայացմամբ և գիտական խորհրդի որոշմամբ ստեղծվում է վերանայման հանձնաժողով՝ ըստ կրթական ծրագրի կամ ծրագրերի խմբի, որը հաստատվում է Կենտրոնի տնօրենի հրամանով:

28. Հանձնաժողովը կրթական ծրագրի վերանայման արդյունքում կազմում է հաշվետվություն, որը ստորագրվում է հանձնաժողովի բոլոր անդամների կողմից: Հաշվետվության մեջ հանձնաժողովը պարտավոր է.

1) վերագնահատել կրթական ծրագրի արդիականությունը և պահանջարկը աշխատաշուկայում՝ հաշվի

առնելով համապատասխան մասնագիտական ոլորտում գիտելիքի կիրառման առկա պրակտիկան, տեխնոլոգիական առաջընթացը և դասավանդման ու ուսումնառության մեթոդների զարգացումը,

2) ուսումնասիրել կրթական ծրագրում ներգրավված սովորողների և շրջանավարտների կարծիքները կրթական ծրագրի որակի վերաբերյալ, ինչպես նաև հիմնական գործատուների բավարարվածությունը կրթական ծրագրի շրջանավարտներից,

3) հաշվի առնել արտաքին ծրագրային պահանջների փոփոխությունները (օրինակ՝ կրթական չափորոշիչներ, որակավորումների ազգային կամ եվրոպական շրջանակներ, միջազգային առարկայական կողմնորոշիչներ, ոլորտը կարգավորող օրենսդրական պահանջներ) և դրանց հետ համադրել կրթական ծրագրի փաստացի կրթական վերջնարդյունքները, համակողմանիորեն գնահատել կրթական ծրագրի մատուցման փաստացի որակը և ռեսուրսային ապահովվածությունը (դասախոսական, նյութական և այլն),

4) գնահատել ժամանակի ընթացքում կրթական ծրագրի կառուցվածքում և իրականացման մեթոդներում կատարված փոփոխությունների ազդեցությունը կրթական ծրագրի որակի վրա,

5) հաշվի առնել հավատարմագրող կամ արտաքին գնահատում իրականացնող կառույցների եզրակացությունները,

6) կատարել կրթական ծրագրի քննադատական վերլուծություն՝ դիտարկելով դրա ուժեղ ու թույլ կողմերը իրականացման ընթացքում,

7) հիմնավորել կրթական ծրագրի շարունակման կամ դադարեցման նպատակահարմարությունը:

29. Հաշվետվությունը Կենտրոնի կրթության որակի ապահովման բաժնի կողմից ներկայացվում է գիտական խորհրդի քննարկմանը, ինչի արդյունքում Կենտրոնի գիտական խորհուրդը որոշում է շարունակել կամ դադարեցնել կրթական ծրագրի իրականացումը Կենտրոնում:

IV. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

30. Սույն կարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են Կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ:

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Կրթական ծրագրի մշտադիտարկման հաշվետվության ձևաթերթ

Ձևաթերթը լրացնում է կրթական ծրագրի մշտադիտարկման խումբը, որը հետազայում ներկայացվում է ԳԿՄԿ կրթության որակի ապահովման բաժին:

Կրթական ծրագրի անվանումը _____

Մասնագիտությունը _____

Շնորհվող որակավորումը _____

Ուսուցման ձևը (առկա, հեռակա, հեռավար) _____

Կրթական ծրագրի սկզբնական հաստատման ամսաթիվը _____

Կրթական ծրագրի նախորդ մշտադիտարկման ամսաթիվը _____

Կրթական ծրագրի նախորդ վերանայման ամսաթիվը _____

1. Նախորդ մշտադիտարկման արդյունքներով ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների

պլանի կատարողականը

Թիվ	Միջոցառում	Կատարողականը	Պատասխանատու անձ	Ծանոթություն
1.				
2.				
3.				
4.				
5.				
6.				
7.				

Հաշվետվության ենթակա են պլանով նախատեսված բոլոր միջոցառումները

2. Կրթական ծրագրի քանակական բնութագրերը

Ուսումնական տարի	20.. / 20..	20.. / 20..	20.. / 20..
Ընդունելությունը			
Դիմորդների թիվը			
Ընդունելության անցողիկ շեմային միավորը			
Ընդունված սովորողների թվաքանակը			
Ընդունելության միջին միավորը			
Ուսումնական առաջադիմության ցուցանիշները			
Սովորողների հանրագումարային միջին որակական գնահատականը (ՄՈԳ)			
«Գերազանց», «լավ», «բավարար» գնահատականների բաշխումն ըստ սովորողների թվի (%-ով)			
Դուրս մնացած/ վերականգնված սովորողների թիվը			
Տվյալներ կրթական ծրագրի շրջանավարտների վերաբերյալ			
Ամփոփիչ ատեստավորման միջին գնահատականը			
Հաջորդ կրթական մակարդակում կրթությունը շարունակող սովորողների մասնաբաժինը			
Մասնագիտությամբ կամ հարակից ոլորտում աշխատանքի անցած շրջանավարտների մասնաբաժինը			

3. Կրթական ծրագրի որակական բնութագրերը

Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը

4. Սովորողների բավարարվածության հարցումների արդյունքները

Ներկայացվում են կրթական ծրագրի վերաբերյալ սովորողների շրջանում կատարված հարցումների արդյունքները՝ դասընթացների մատուցման որակի, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների և դրանց արդյունավետության վերաբերյալ, ինչպես նաև նախորդ երկու տարիների ընթացքում սովորողների կողմից բարձրացված հարցերը:

5. Շրջանավարտների բավարարվածության հարցումների արդյունքները

Ներկայացվում են կրթական ծրագրի նախորդ երկու տարիների շրջանավարտների բավարարվածության հարցումների ամփոփ արդյունքները, որոնք վերաբերում են կրթական ծրագրի պրոֆիլին և համապատասխանությանը մասնագիտական աշխատաշուկայի արդի պահանջներին, կրթական ծրագրի բովանդակությանը և կառուցվածքին, դասավանդման և ուսուցման ընտրված մեթոդաբանությանը, գիտելիքների գնահատման գործընթացին, ուսումնական գործընթացի կազմակերպմանը և ուսումնառության առկա ռեսուրսներին:

6. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի նկատառումները

Ներկայացվում են Կենտրոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի նկատառումները կրթական ծրագրի իրականացման ընթացքի և ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակի վերաբերյալ, գնահատվում են կատարված փոփոխությունների և միջոցառումների արդյունավետությունը, կրթական ծրագրի ռեսուրսային բավարարվածության վիճակը հաշվետու ժամանակաշրջանում և այլն:

7. Համագործակցությունը այլ ստորաբաժանումների հետ

Գնահատվում են կրթական ծրագրի իրականացմանը օժանդակող Կենտրոնի այլ ստորաբաժանումների հետ համագործակցության ձևերն ու արդյունքները:

8. Կրթական ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների պլանը

Կազմվում է ծրագրի որակի բարելավման/բարձրացմանն ուղղված միջոցառումներ ուսումնական ստորաբաժանման (ամբիոնի) և ԳԿՄԿ վարչակազմի մակարդակով իրականացվելիք միջոցառումների (գործողությունների) պլանը հաջորդ երկու ուստարիների համար.

Հ/Հ	Բարելավման ոլորտը/ առարկան	Պլանավորված միջոցառումը/ գործողությունը	Պատասխանատուն	Կատարման ժամկետը
1				
2				

3				
4				
5				

Մասնագիտական ամբիոնի վարիչ _____

Ընդհանուր եզրակացություն կրթական ծրագրի մշտադիտարկման վերաբերյալ

1. _____
2. _____
3. _____
4. _____
5. _____

Մշտադիտարկման արդյունքները քննարկվել են
 ամբիոնի նիստում (
 (նիստի արձանագրություն թիվ , ամսաթիվ):

Ամբիոնի վարիչ՝

Մշտադիտարկման հաշվետվությունը ստուգվել է ԳԿՄԿ կրթության որակի ապահովման
 բաժնի կողմից:

ԳԿՄԿ կրթության որակի ապահովման բաժնի պետ՝